
Ինքնակալին հրովարտական ծովային դոր-
ծոց պաշտօնեայ անուանեցաւ Միւշկիւ-
թեան աստիճանաւ :

Ազգայնոսի փոխարքայ Բարձր . Սա-
լիս փաշային փախձանին ստուգուեցաւ :
Աղէքսանդրիայէն եկած հեռադրական
լուր մը կը ծանուցանէ թէ կիրակի զիշեր
ժամը վեց ու կէսին փախձաններ է՝ իր ժա-
մանակէ մը վեր ունեցած հիւանդու-
թեամբ որ փրկին օրերս ծանրացեր էր :

Սալիս փաշան մեծա-
նուն Մէհմետ Աին փաշային չորրորդ որ-
դին էր՝ 1822ին ծնած : Պատանեկութեան
ժամանակը Փարիզ դաշած և նախկին
թաւան ուսումններն հոն սովորած էր : 1854
ին՝ Ապապ փաշայի փախձաններէն ետեւ՝ Ս-
զիպտոսի փոխարքայ անուանեցաւ , որով
ինն տարի իշխանութիւն վարած կըլլայ :

Սիակ սրու զաւակ մը կը թողու ,
Թօսուն փաշան , որ դեռ տղայ է : Ուս-
տի երկնցութեան կարգաւ իրեն կը յաջոր-
դէ փախձանեայ Իպրահիմ փաշայի որդի
Բարձր . Իսմայիլ փաշան , որուն եղբայրն
է Բ . Դրան նորոնորդ փաշան : Սալիս
տօնեայ բարձր . Սալիս փաշան :

Սպարապետներն անդրկական լէվանթ
Հերոյա լեզուներ կը ծանուցանէ թէ եր-
կուշարթի օրը օգոստոսի 1-ին ինքնակալը
հեռագրով հաստատեց բարձր . Իսմայիլ
փաշային յաջորդութիւնը :

Սպարապետ հրամանաւ
Արքայութեան բարձրագոյն տոնէին
ստաճին քարտուղարի օգնական Սահ-
մուտ պէյը նոյն տոնէին ստաճին քար-
տուղար անուանեցաւ : ստաճին կարգի
պաշտօնատարութեան երկրորդ աստիճա-
նաւ :

Բ . Դրան կրօնական գործոց գլա-
նին գլուխ Սուլթան Էֆենտին արքու-
նի պաշտօնի չորրորդ քարտուղար ան-
ուանեցաւ :

Թարգմանեաց գլխանին անգամ Բեռ-
միլ պէյը կրօնական գործոց գլխանին գը-
լուխ անուանեցաւ :

Սպարապետ տեղութեան երկրներուն
մէջ՝ ինչպէս ամենուն յայտնի է՝ մինչև
ցայսօր սովորութիւն էր նամակները թղթա-
տարներուն երեք օրերը նամակատուներ տա-
նիլ յանձնել , և նոյն միջոցին բնականաբար
եղած բազմութեան պատճառաւ մեծ նե-
ղութիւն կը քաշուէր կշռուէր , զինը ու-
ղեւոր և վերակացուաց յանձնելու մա-
սին :

Սակեց՝ դատ յանձնուած նամակներուն
մէջ երբեմն ալ խորհրդաւորութեան կա-
կած կը լարար , և ասկէց վերակացուներն
ալ մեծ նեղութիւն կը կրէին : Այս պատ-
ճառներով մեծ կարեւորութիւն կար այս
գործը կարգի դնելու , և Աւրուպայի նա-
մակատուներուն մէջ գործածուած նա-
մակագրողներուն (թէնպու բօսթ) սովոր-
ութիւնը Օսմանեան նամակատուներուն
մէջ ալ գործածելու , որ պատահած ան-
տեղութիւնները բաւարարէն զատ՝ մեծ
գիւրութիւն և օգուտներ ալ ունի : Ուս-
տի Օսմանեան թղթատարութեանց վե-
րատեսչութիւնը նոր կարգադրութիւն մը
ըլլաւ , որ զանազան պաշտօնատան և բարձ-
րագոյն տոնէին մէջ քննուելով՝ օգոստոս-
փառ Ինքնակալին բարձր հաւանութիւնն
ստացաւ : Հետեւաբար , արքունի փողե-
րանոցին մէջ յատկապէս նամակագրող-
ներ տապալուեցաւ որոց գործադրութիւն-
ը հետեւեալ կերպով պիտի ըլլայ :

Նամակագրողները չորս տեսակ են .
հինգ զուրուշնոց , երկու զուրուշնոց և
քառասուն ու քսանի փարսնոց , 5 զուրուշնո-
ցը կարմիր , երկուքնոցը կապոյտ , 40 փա-
րանոցը մանիշակագոյն (մօն) : Եւ 20 փա-
րանոցները դեղին են , և քանիցն ըլլալ-
նին ալ վրանին գրուած և թուղթայով ալ
գործածուած են :

Այս նամակագրողներն ստակի պէս
ընդունելի ըլլալով , ամեն մարդ իրեն պէտք
եղածին չափ առաջուց կրնայ գնել , և
տեղ մը նամակ ղրկելու ատեն՝ կայսերաւ

կան նամակատուներն հրատարակուած և
երեք զուրուշնի ծախուած աշխարհացոյցին
վրայ տեղադրէն հեռաւորութիւնը գտնելով
քանի զուրուշն նամակի ծախք վճարել
հարկ էնէ՝ այնչափ ստակի արժէք ունե-
ցող մէկ կամ երկու կամ երեք և աւելի
նամակագրող փակցուել նամակին վրայ
և ամենէն մօտը գտնուած թղթատարու-
թեան տուփին մէջ տանիլ ձգել ,
ուսկից որոշեալ ժամանակին առնուելով
իրենց սահմանեալ տեղերը կը ղրկուին :

Առ այժմ՝ նամակագրողները ստա-
տեղ կը ծախուին : Կ . Պօլիս կայսերա-
կան նամակատուներ , Իւսկիւտար , Պե-
շիկթաշ , Իւրա , Գասթափաշ , Էյուսպ ,
Սուլթան Մէհմետ , Սուլթան Պաշա-
ղիս , Սուլթան Ահմետ և Գասթա-
թեղ , որոշուած յատուկ գործակալներու
ձեռք , իրենց բուն արժէքովը : Սա-
կայն ամեն մարդ պարտաւորեալ չըլ-
լալով նոյն նամակագրողներէն յա-
ռաջուց գնելու , վերջիշեալ գործա-
կալները թէ՛ նամակները կշռուել և թէ՛
ուրիշ պարագաներու վերաբերեալ ծանօ-
թութիւնները պիտի տան , և դժուա-
րութիւն մը ունեցողը նոյն գործա-
կալներուն հարցընելով և նամակագր-
ողներն անոնցմէ գնելով՝ պիտի կրնայ ձե-
ռքը նամակին վրայ փակցուել և սահ-
մանեալ տուփին մէջ ձգել :

Պաւտուներուն մէջ այս գործողու-
թիւնը թղթատարութեան վերատեսչու-
նէրը պիտի քանդէ , և մեծ քաղաքնե-
րու մէջ ալ քանի մը պատշաճ տեղեր յա-
տուկ տուփեր պիտի հաստատուին :

Այս նամակագրողներն Օսմանեան
տեղութեան ամեն երկրներուն թղթատա-
րացի ընդունելի պիտի ըլլան , միայն թէ
պէտք է որ որոշեալ գնէն պահուս կամ
գործածուած նամակագրողները չփակցուի-
վան զի այն ժամանակը նամակներն իրենց
սահմանեալ տեղերը չպիտի յանձնուին :

Սակեց՝ դատ , սոյն նամակագրողներն
հասարակ նամակներու և լրագիրներու
համար յատկացեալ ըլլալով , սուսուրե-
րու վերաբերեալ նամակները բնականա-
բար ընկալաւոր հետ փոխանակուելու պէտք
ունենալով , որոշեալ տուփին մէջ չպիտի
ձգուի , այլ հարկ է գործակալներուն
յանձնել՝ որպէս զի պէտք եղած գրու-
թիւնն ստացուի : Թղթատարութեան
վերատեսչու չգտնուելուն պատճառաւ
նամակի ծախքը չվճարուած տեղէ մը ե-
կած նամակներուն ծախքը՝ նոյն նամակ-
ներն ընդունողներէն ստնուել հարկ ըլ-
լալով , աւելի ծախք մը չպահանջուելու
համար ալ յատկապէս խահուէի գունով
յատուկ գրողներ շինուած են , որ մայ-
րաքաղաքիս նամակատան կողմէն պիտի
փակցուին այս կերպ նամակներուն վրայ :
այս գրողներ քանի զուրուշնոց որ գան-
դուի նամակին վրայ , ընդունողը այնչափ ըս-
տակ պիտի վճարէ , և ոչ աւելի : միայն
թէ նամակները ցրուողին 20 փարս վարձը
պիտի ստայ :

Հասարակաց շինուածոց (Էյպիէ) վե-
րատեսչութեան կողմէն հրատարակուած
յայտարարութիւն մը կը ծանուցանէ թէ
շէնք շինել կամ նորոգել ուղղութիւնուն
վճարելիք արոց ցուցակը տպուելով՝ մայ-
րաքաղաքիս և արուարձաններուն մէջ
հաստատուած շինուածական գրասենակ-
ներուն դրանք վրայ կախուած է :

Յիշեալ ցուցակը նաեւ կը վաճառ-
ուի՝ հատր տան փարայի՝ մայրաքաղաքիս
մէջ Այա Սօֆիայի , Սուլթան Սուլթան
Մէհմետի մօտերը , ինչպէս նաեւ Էյուսպ ,
Թօփհանէ , և Իւսկիւտար Էնի ճա-
միլի մօտը :

Այն անձինքը որ կը կախածին թէ ու-
րինաւորապէս որոշեալ տուրքէն աւելի
կուղուի իրենցմէ տուն մը խանութ մը
կամ պատ մը շինելու կամ նորոգելու հա-
մար , և կամ յատկապէս մը շինելու կամ
գետին մը չափելու համար , պէտք է ա-
ռեւորական գործոց պաշտօնատուներ եր-
թան , և իրենց բողբոջ հասարակաց շին-
ուածոց վերատեսչութեան ուղղեն , ուր

այս խնդիրները պիտի քննուին :

Հասարակաց խանութան ամսոյն բաց-
ուելիք Օսմանեան արուեստահանութիւն
համար տեղութեան դաւառներէն սպաս-
ուած արուեստական բերքերն անցեալ
շաբաթէն ի վեր հասնիլ սկսան իրենց
ներկայացուցիչներով :

Արուեստահանութեան տեսնելու համար
ներս մանելու զինք նոր անօրէնութեամբ
մը 4 զուրուշ ուղղուեցաւ : Արաթը օր
մալ 10 զուրուշ պիտի ըլլայ :

ԱԶԳԱՅԻՆ

Սիվիլ Հիսարէն կրուած նամակները
տեղեւոյն ազգայիններուն ուսումնասիրա-
կան եռանդեանն ու ջանիցը վրայ բերի-
լաւիթ և միջնարակայն լուրեր կը հա-
ղորդեն մեզ :

Պարտիները մարդկութեան ապագա-
յին գործարաններն են կրտ՝ ժամանակա-
կից միջնարակ մը (Ժ . Սիվիլ) : Ուստի
ինչպէս արդէն ուրիշ անգամներ ալ ըսած
ենք , ուրտի կըլլանք մեր գաւառաւորնալ
ազգայնոց մէջ տեղ տեղ օր ըստ օրէ տե-
նուած ուսումնական շարժման վրայ ,
ինչպէս որ փոխարքայաւոր կը տրամիք
յետամնաց և յետախաղաց վիճակայնոց
վրայ , և չենք կէտաբար մեղադրել վեր-
ջիններուն անարգաբանալի ընթացքը ինչ-
պէս որ կը քաջալերենք և կը գովենք թէ՛
ժողովրդեան բարոյականին առաջնորդ ե-
ղբներուն ջանքը , և թէ՛ նոյն իսկ ժողո-
վրդեան արթնութիւնը : Թէ՛ հասարա-
կաց հայր եղբայրներուն ազգայնէն ծա-
ռայութիւնը , և թէ՛ հասարակութեան
այնպիսի հայրանիմո՝ անձանց տուրած հո-
գածութեան յարգը շանչալով՝ անոնց
ջաննոց աջակցութիւնը : Ուստի Սիվիլ-
հիսարի պէս գիւրացաւոր մը մէջ մեր
համայնի եղբայր իրենց կարողութեանն
վեր գարգահան բարեկարգութեան տա-
րած հոգն ու խնամքը անշուշտ ուշադ-
րութեան արժանի պէտք է համարուի :

Մեզի հաղորդուած նամակներուն
նայելով՝ յիշեալ գիւրացաւորներն փոքրիկ
վարժարանը 500ի չափ աշակերտ կը պարու-
նակէ երկու Տեղուի վեց բարեկրն . քահա-
նայից և վեց բարեկրն յարի անձանց ջան-
քովը , և Սիվիլհիսարցի մեր ազգայնոց բա-
րեկրական նպատակներուն անցեալ քանի
մը ամիսներուն մէջ երեսուն հազար զու-
րուշ վճարելով գարոյցին կից տուն մը
գնել են , և 30 հազար զուրուշ ալ ծախք
ընելով Յիսուսեան անուն վարժարանին
շէնքը ընդարձակել են :

Այս նիւթական բարեկարգութեան
հետ կարեւոր էր որ բարոյապէս բարեկար-
գութեան ընթացքն ալ տեսնուէր . քանզի
բաւ մեզ՝ գարոյցաց դարգացումը միշտ այս
երկու մեծ գործութեանց վրայ կը կայանայ :
Նիւթական , բարոյական . եթէ ասանց
Նիւթականի գարոյց մը բարեկարգ և
հաստատուն չկրնար ընթանալ , ասանց
բարոյական զօրութեան ալ գարոյց անուան
արժանի չէ : ալ աւելի կը վայել մարդ-
կութեան ծաղիկներն ու ազգին զաւակներն
անպիտան և սպարդիւն մեծցնելու ծու-
րան գնել այնպիսի գարոյցներու անու-
նը , ինչպէս որ մայրաքաղաքիս մէջ ան-
գամ ցաւալի օրինակները տեսնելու դժ-
բարդութիւնն ունինք :

Պարտացոյց բարձրական գործութեան
փորձաքանները հրատարակական քննու-
թեամբ տղայոց ուսման մէջ ըրած յա-
ռաջադրմութեան արդիւնքը պիտի ըլլայ
և այս արդիւնքն ալ զօհապուրցիլ կըր-
պով տեսնել են Սիվիլհիսարցի մեր հա-
մազգիք՝ անցեալ դեկտ . 30ին կատարուած
քննութեամբ մը , որուն մէջ ի ներկա
յութեան տեղեւոյն ուսումնասիր ժո-
ղովրդեան , կրթական դասուն և քանի
մը յոյն և գաղղիացի լեզուագէտ վաճա-
ռականաց , աշակերտք քրիստոնէական
վարդապետութեան , սրբազան պատմու-
թեան , հայերէն քերականութեան ,

ճարտասանութեան , Հայոց պատմութեան ,
թուարանութեան և աշխարհագրութեան
ուսմանց մէջ քննուելով , բաւական գո-
հացուցիչ պատասխաններ տուել են , և
33 աշակերտ ալ իրենց յառաջադրմու-
թեան աստիճանին համեմատ արժանաց
խաչանդաններով վարձատրուել են , և թէ՛
հայերէն եւ թէ՛ աւանգիւրէն բանախօսու-
թիւններով և քաղցրանուագ երգերով եւ
թիւն ժամու մէջ հանդէս ուսարտեր է :

Այսպիսի գարոյցական հանդէսներ
հրատարակած ժամանակին առաջադրեալ
նպատակ մ'ունինք , այն է յորդորու քա-
ղաքի ըլլալ նոյն ազգերուն , և իրեն .
ընկալ ցոյց տալ ուրիշ ազգերու :

Սիվիլհիսարի մէջ գարոյցական քնն-
ութեան հանդէս մը նշանաւոր է մանա-
ւանդ սա նկատմամբ , որ նոյն ազգի բնու-
կիչներն առհասարակ հայերէն լեզուին
գործածութիւնը գրեթէ մոռցած տաճ-
կերէն կը խօսին , և անշուշտ բարեկարգ
գարոյց կը այդ մեծ թերութիւնը օր ըստ
օրէ կը բառնայ իրենցմէ : Հետեւաբար
Յիսուսեան վարժարանին թէ՛ ազգասէր
քննաճշտուները և թէ՛ Աստուծոյ անուանի
պատուարժան տիրացու Պարտաւարաւոր
կաւազ գաստուուն յատուկ շնորհակա-
լութեան արժանի են : Այս վերջինը իւր
ունեցած եռանդուն ջանքին եւ արդեան
ցը համար ոսկի շղթայով ոսկի ժամացոյց
մը և դոհարապարզ մատանի մը նուէր և
իր անսկիւն վարձքին ալ յաւելում մը
ընդունել են :

Այս վերջին պարագան ալ յայտնի ա-
պացոյց մ'է Սիվիլհիսարցւոյ ուսումնասի-
րութեանը որ իրենց զաւակներուն կրթու-
թեանը ջանաբար եղող մէկը այդպէս
պատուել ուղեր են , մինչդեռ կը գանդ-
ւին այնպիսի տեղեր ուր գաստուուաց օրի-
նաւոր ամսականն անգամ երկու տար իէ
ի վեր անվճար մնացած է

Այս տղերէն վերջը հետեւեալ նա-
մակն ալ որ Հայկէն գրուած է մեզ ,
առանց մեր կողմանէ գիտողութիւն մը
յաւելցնելու՝ ազգայնոց ուշադրութեան
նը կը ներկայացնենք : Հայկէն Սիվիլ-
հիսար իրարու հետ բարդապարտ մը ար-
գը ընկերացողաց գաստուունին յանձնե-
լով :

Մեծարգոյ խաբարդի :

Մենք որ ազգին մեծագոյն մասին փա-
փաքանակ կցորդ գտնուելով՝ կուզենք անդ-
ուոյս հայ պատանիները բանիւրուն դաստիա-
րակի մը յանձնել (ինչպէս որ յանձնեցինք) ,
զաս մը մարդիկ՝ չենք գիտեր ինչ գիտաւո-
րութեամբ կամեցան խաչնդոտն ըլլալ սոյն ազ-
գօգուտ նպատակին : Նիւթութիւնը այն ա-
ստիճան պատած է այդ մարդոց միտքը որք
իրենց անխառնութեան յաղթանակը կանգնե-
լու ջանքով անհաղթ համարձակեցան : Եւ ինչ
առաջնորդ չենք ընդունիր , եւ դուն գարոյցին
ի՛նչ կը խառնուիս , մինչ ուսումնական վար-
ժապետ չենք ընդունիր , ձայնաւոր վարժա-
պետ կուզենք : Եւ ինչ Ահա ասիկ
այս նոր փորձով ստուգեցինք , եւ ձեզ ալ
գիւրաւ համազգեւո համար հարկ կը համա-
րինք հետեւեալ նկարագրութիւնը ընել :

Պ . Աշոտ Գ . Գալթեան երիտասարդը
որ եօթն ամաց հետէ քաղաքիս մէջ Քիւրք-
ճեանօֆի բացած աղջկանց գարոյցին դաստի-
արակութեան պաշտօնը ամենայն խոհմօտ
թեամբ և բարեկարգութեամբ կը վարէր , այս
մօտերս կրամացի տատնաներէ չարժեալ իւր
պաշտօնին կրտաքանցաւ : Մենք եւ ժողովրդ-
եան մեծագոյն մասն ալ համարուած ունե-
նուով իւր վրայ իւր միտքով անգարոյցին բա-
րեկարգութեան խիստ կարօտ վիճակը տեսնե-
լով՝ կանչեցինք զինքը և իրեն հետ պէտք
եղած խօսակցութիւն մասոյս ինչ ազգային գարո-
յցին դաստիարակութեանը : Սակայն Պետրոս
Կարաճա (որ ազգապետ է եղեր մենք չգիտե-
նք , ինչու որ Առաջնորդ գտնուած տեղի
ուրիշ ազգապետ չըլլար) եւ այլք գարոյցին
վարժապետաց հետ ազգականութիւն ունե-

նախով եւ արդեալ կը վազեն յառաջ-
նորդարանս եւ երկայն բարակ խօսքերով եւ
չստ մընալ Գալիկիանի սրտառնոյն դէմ բար-
բաջմունքներ ընկնէն յետոյ, անոր անմիջա-
պէս դպրոցէն հեռանալը խափէ կը պահանջեն
բայց մեր խոհմութիւնը չնեղեց որ այս ան-
գամ իրենց անապինք. (քանզի ժողովրդեան
մեծագոյն մասին հաւանութեամբ դաստոտ
կարողած մէկ պատուաւոր երիտասարդը
վարժարան չէինք կրնար արտաքսել, ան-
հաճելի ըլլալու համար). նոյն ժամանկ մեր աղ-
գապետ Պետրոս աղան բարեկամաբար կանչել
տուաւ զԳալիկիան, եւ վարպետօրէն ան-
դամբար թիւնը գովելով անաշխարհեց որ մէկ
քանի օր հեռանայ դպրոցէն՝ ազգիս մէջ խո-
վութիւն չծագելու համար, մինչեւ որ իրենք
իրենց որոշում մ'ընեն. ու չիմերիտասարդն
ալ սիրով ընդունեց անոր առաջարկութիւնը
եւ խնդրեց որ զինքը դպրոց դնողները նոյնը
իրեն կրկնեն. այն ատեն որ մինակ մենք էինք
հին, Պետրոս Ղարաճա հրամայեց մեզ նոյնը
կրկնել. բայց ինչպէս առաջ լսինք, մեր խո-
հեմութեան դէմ էր անանկ բան մը ընելը.
յորմէ Պետրոս դարձանալով կը յարձակի մեր
վրայ յանդուգն փորձեր փորձելու. . . . այն
ալ ուսուցչին հօգիտօք կուտանք. . . .

Արդ՝ ակներեւ տեսնք ասոնց չար կիր-
քերը՝ Նախ՝ կը հարցունենք, թէ իրենց հետ
գտնուած երկու երիտասարդները ազգային
(հին եւ նոր) օրինաց նկատմամբ այս տեսակ
գործերու մէջ ձայն կրնան ունենալ. Բ. Տաճ-
կաստանցին Ռուսիացուի եւ Ռուսիացին Տաճ-
կաստանցուի գործին կրնայ խառնուիլ. Գ.
այն անձը որ պանդուխտ է, եւ տէրութեան
տուրքը իւր քաղաքը կը վճարէ, ազատ է որ
եւ է տեղ մը գտնուած ատեն գործի խառնը-
ուելու, ատենց հրաւիրանաց. Դ. Պետրոս Ղա-
րաճա ինքնին ազատ է ուզած առաջնորդը ըն-
դունելու, եւ չընդունածին՝ դէմ յանդիման
« Բեզ չենք ձանձար, չենք ձանձար » ը-
նելու :

Այս ամեն չարեաց առաջը ատեն վար-
չութեան կը մնայ. այսպիսի տարիներէ 'ի վեր
զանազան քաղաքներ առաջնորդութիւն ը-
րած էինք. բայց չէինք տեսնել որ Պետրոս մը
առանց իրաւանց յանդէսեր մեզի « Բեզի
չենք ընդունիր, դուն գարոցին չես կրնար
խառնուիլ » ըսելու :

Մեծարդոյ խմբակի, կանխաւ ընդու-
նելով մեր շնորհակալութեան առեւառն-
եայն, բարեհաճեցէք ձեր պատուական լրագ-
րոյն մէջ անկիւն մի շնորհել գրութեանս. եւ
խնդրեմք որ իթէ խումբ մի քաջամուտ եւ
բաժնիւնք գլխեք մեզի իրկէք, վստահ ըլլա-
լով որ սիրով կընթաճուին :

Մնա՛մ փախաքող ազգային յա-
բերիս 1862 թիւով 15 առաջարկութեան
Առաջնորդարան Առաջնորդ Բերիոյ
Հայոց Բաժնի Գործընկերացի

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Հինգշաբթի գիշեր Բարձր. Մեծ
եպարքոս Բեառի վաշան, արտաքին
գործոց պաշտօնեայ Բարձր. Եղիս փա-
շան, եւ Երզրարութեան բարձրագոյն ա-
տենին նախագահ Բարձր. Պետատ փա-
շան Կառուի թատրոնին իրենց ներկայու-
թեամբը պատուեցին :

Ար լսեց որոշոյն բարձրութիւնը յա-
ռաջեկալ շարժուա իրիկուն մ'ալ յառ-
կապէս Երեւեան Հայկական թատրոնին
իրենց ներկայութեամբը պատուելու գի-
տաւորութիւն յայտնել են :

— Տարւոյս սկիզբէն մայրաքաղաքիս
մէջ գաղղիներն նոր շարժաթերթ մը ըս-
կաւ հրատարակուիլ վիմագրութեամբ
Քոնէսթանտինոպոլիս անունով :

Այս լրագիրը քաղաքական, դրամա-
կան, աւետարական եւ ծովային լուրեր կը
հաղորդէ եւ ամեն հինգշաբթի օրերը կը հը-
րատարակուի, Բերայի մեծ փողոցը, թիւ
485, Բիւպլեբաթէօս Ժէնէնայի գոր-
ծակալութեան գրասենեակը :

— Գաղղիական Բաժնի լրագրին մէջ կը
կարդանք թէ այս օրերս քանի մը մեծ ըն-
կերութիւններ՝ Տաճկաստանի մէջ երկա-
թուղիներ շինելու առաջարկութիւններ
կրկնեն Բ. Դրան. Երկաթուղի մը խօսք
կայ, որ Երզրարական ծովուն եզերքէն ըս-
կելով Պէլլիստ պիտի հասնի Ելազնի-
պէն, Բուսէլէն եւ Սեբասթիէն անցնելով
Կոնստանտինոպոլիս խօսք կայ Կ. Պոլսէն Ենդ-

րիանուպոլիս երկաթուղի մը շինելու, ու-
րիշ մ'ալ Ա. Կոնստանտինոպոլիս Եւ-
սիոյ մէջ ալ քանի մը երկաթուղիներ շի-
ղեր Իսթիքէն ծախայ պիտի ելնեն փոքր
Եւսիոյ ներքի կողմերը բաշխուելու : Ա. եւ
Ջապէս կրտուի թէ գաղղիական ընկերու-
թիւն մը հրովարտակ մը ստացել է Բիւ-
չիք Զեքմէճէի ծոցին մէջ առեւտրա-
կան նաւակայք (տօք) շինելու, եւ Զեք-
մէճէն Կ. Պոլսի ալ երկաթուղի մը շի-
նելու :

— Մեղեալները Եւսիստար պատու-
տաճիկ կին մը՝ որ գրաւով ստակ փոխ
կուտար, տանը մէջ սպաննուելու ու կո-
ղտուելու էր : Այս եղեւնագործութեան
հեղինակները՝ որ Թաճիք ու Իսթիքիս
անունով երկու մարդ են եղել՝ անցեալ
շաբթու բռնուեցան : Թաճիք փախել-
ու համար շոգեմաւ նստելու ատեն մար-
դի գործակալները կարասիները կը քննեն,
ու քանի մը թանկագին նիւթեր գտնե-
լով կ'ստանան կերթան : Այսին ալ կը
նային եւ խել մը գոհարեցնէին կը զբա-
նեն, որոնք ինք ըլլալը չկրնար հաստատել
եւ վերջապէս կը հարկադրի ճամբար խոս-
տովանելու : Մոտիջապէս ընկնելու ալ կը
գտնուի եւ հիմա երկուքն ալ օստիկանու-
թեան բռնուի են :

— Մեղեալ հինգշաբթի սուտու Գե-
ղիկաշ անշէն դեմնի (վիսնէ) մը մէջ
նորածին տղու մը մարմին գտնուեցաւ, որ
չուանով պարանոցէն խոզեր ու հոն նե-
տեր էին :

— Մեղեալի պատերազմին սկսելէն
'ի վեր Եւրոպայէն գաղթականութիւն
ները դադարել էին : Այս օրերս յանկարծ
նորէն սկսան աւելի ընդարձակ կերպով
Միջիւ աղբաւ ընտանիք Գեղեանայէն
եւ մանաւանդ Մեղեանայէն Եւրոպիա կը
գաղթեն : Ետը պատճառը Եւրոպայի
բանակի գործարաններուն մէջ գործ
չըլլալն եւ Եւրոպիայի մէջ ընդհանրապէս
շատ գործ գտնուիլն է : Օրինակաբար
Թեան պատճառաւ Եւրոպիայի գործա-
ւաններուն մէջ բանուորները քիչնալով
աւելցնելով բազմապատիկ բարձրացան
ուստի Եւրոպայի մէջ անգործ մնացած
եւ յետին թշուառութեան մէջ ինկած
բիւրատու գործաւորներ խումբ խումբ
Եւրոպիա կը գլխեն : Գաղղիայէն դադող
ղրկիւ է չկայ. որովհետեւ կառավարու-
թիւնը պարսպ մնացող գործաւորներուն
օգնութեան համար Բոսա-
նէն Լիւան երկաթուղի մը շինել սկսաւ,
որով 200 հազար գործաւոր երկու երեք
տարի կ'ընդունին, բանակի գործարաննե-
րուն մէջ ստացած աւելցնելուն չափ ա-
ւելցէք շահելով :

Այս իրողութիւնները պէտք է որ
Տաճկաստանի երկրագործներուն յորդոր
մը բլրան բանակի մշակութիւնը զարգա-
ցնելու, որպէս զի Եւրոպայի գործա-
ւաններուն բանակի մտափոխարտեն, զոր
երկար ժամանակ չալիս կրնան Եւրոպիա-
յէն ստանալ :

Հեռուեալ նամակը ցաւալի լուր մը
կուտայ :

Մեծարդոյ խմբակի Մասիս պատուա-
կան լրագրոյ :

Նախընթաց տարին Հայ ազգիս համար
դժբաղդութեանց եւ աղետից չար մ'էր. Կար-
ծես թէ հերիք չկրնան կողմանէ գլխուն տե-
ղած դաժն եւ աղիւղորմ արկածները, ահա
անդու ժամանակ իւր սուր մանդաղով հայ-
կիւնեաց քաղցրիկ յոյսերը արմատաւոր ջնջելու
կը ջնարայ : Մինչդեռ վերջի ազգայնաց գա-
յուն սիրտերը մէկ քանի պիտանի եւ օգտա-
կար անդամոց անակոնելի կորստեամբ կը
վշտակէր. ահա ուրիշ նոր հարուած մ'ալ որ
առաջիններէն սլակաս արտաքին չէ, եկաւ
աւելցաւ մեր կարելիք սրտերուն վրայ Չիւ-
կիան Եւրոպիայի խմբակի, իմ արտաքին գտնե-
սա ժամուռ ջնջել, երբ այս սղակ եւ գոծա-
բեր լուրը ձեզ հաղորդելի ստիպուեիմ, որուն
համար քաջ դիմեմ, թէ դուք ալ մեզմէ նը-
ւաղ չպիտի ցաւիք :

Մեծարդոյ բիշէկ Մոզեան Գրիգոր ազգայն
եղբայր Գ. Ստեփան Մոզեան, բարեկիրթ, ու-
սումնական եւ աղքատէր պատանին, ինչպէս

յայտնի է չատերուն, չորսամիս է 'ի վեր Թարիկ
ղրկուած էր բժշկութեան փախուի արհեստին
հետեւելու համար. բայց դժբաղդարար այս
օրերս հոն սաստիկ եւ ցաւալի հիւանդութիւն
մը բռնկուեց որչափ որ հոն գտնուող ազգա-
կիցները շատ աշխատար են զինքը այս վստա-
գաւոր վիճակէն ազատելու, բայց սուղ . . .
1862 լստ. Գեղեանք 12ին իւր կենաց գե-
ղած իծաղ արեւը մարեր է 20 տարեկան դեռա-
բողով հասակին մէջ՝ թողլով 'ի սուգ անմիւ-
թար Թարիկ գտնուող իւր սիրելի ազգակից-
ները :

Հանգուցեալ պատանին խաղաղիկ Ներ-
սիսեան բարեհամբաւ դպրոցին վաղեմի յառա-
ջադէմ աշակերտներէն ըլլալով իւր ազգի եւ
ուսումնաստէն ընտելութեամբ եւ համեստ
վարուքը իւր հասակակիցներուն բարի օրի-
նակ մը եղած էր միշտ, Նաեւ « Նախագիտե-
լիք մանկանց » անուն գրքուկին թարգմա-
նութեամբ իւր նախախաղիքն ալ ընծայել էր
սիրելի ազգին իրիւր գասաղիքը հայ մանկը-
ւոյն 'ի յիշատակ իւր անմահ հոգւոյն. միով
բանիւ իր գովելի եւ չքնաղ հանգամանքներու-
մը յայտագալ ազգիս սիրտանի եւ օգտակար
անդամ մը ըլլալու յոյսը ունէինք :

Բարեհաճեցէք Սեփիւ բարեկամ՝ սոցիալ-
խութ տղիւրու փոքր ինչ տեղի շնորհել ձեր
պատուական լրագրոյն էջերուն մէջ, որուն
համար իմ շնորհապարտ զգացմանց հաւա-
տիքը ձեզ նուիրել կը փութամ :

Տ յուլի. 1865 Գեղեանք Գ.
Նախագիւղ Աւետիսեան :

Մեծմուսլին մէկ սխալ դատաստանը :

Բազմոյս 568 թուոյն մէջ Գաղղի-
այի հարուստ բայց աննշան դերձակի մը
մահուան աւթիւ ըլլած մէկ համառօտ
գիտողութիւններ՝ պատճառ տուել է վե-
րոյիշեալ լրագրոյն « Մասիսի մէկ մեծ
սխալ » ըսելով երկար եւ խիստ յօդուած
մը մեզի գէմ հրատարակելու :

Հրատարական գրութեանց վրայ ող-
ջալիտ ընդապառնութեան իրաւունքը (եթէ
Մեծմուսլին նոյն յօդուածը կրնայ քնն-
նադատութիւն կոչուիլ) երբեք չենք զե-
լանար որու որ ալ ըլլայ. եւ մեր վրայ խօ-
սելով՝ անսխալութեան կարծիք ո'չ ու-
նեցեր ենք, ո'չ կուզենք ունենալ, եւ ոչ
ալ կը պահանջենք որ մեր գրածներուն
ամենն ալ իրիւր պտուղամ ընդունուին :

Ռեալիստութեան այս երազը երբեք
մտաբերած չենք. բայց միանգամայն ծանր
կը թուի մեզ տեսնել, որ մեր ազգասի-
րական մտքը բրած մէկ պարզ գիտողու-
թիւնը չարաչար մեկնութեանց ենթակայ
ըլլայ, մանաւանդ պաշտօնակից մը՝ որմէ
չէինք յուսար թէ այսպիսի աւթի մը ըս-
տաբեր ընդունայն բանակուի մը ասպա-
րէզ բանալու, եւ հայկէն նայածի պէս
անաշխատանք խօսքերով նոր տարւոյս ա-
ռաջին թերթին մէջ մեզ շնորհաւորե-
լու :

Մեր լրագր պարզ գիտութեան բուն
շարժառիթն եղած էր յայտնել թէ կը
փափաքէինք որ մեր ազգին մէջ խօսքի տէր
ըլլալու ձկաղնիքը սոսկ իրենց հարստու-
թեան ուժովը չըլլան, այլ հանձար, գի-
տութիւն եւ բարոյական վարկում ալ ու-
նենան :

Մեծմուսլին ասոր դէմ կառարկէ մե-
զի Եւրոպայի մէջ ցեղական ու ժառանգ-
գական լրտեր, մարքիւնք, կոմսեր, դուք-
սեր գտնուիլ, որոնք թէ՛ խեղճի ըլլան
եւ թէ՛ խելք, թէ՛ հարուստ եւ թէ՛ աղ-
քատ, խօսքի տէր են եղեր :

Եւրոպայի այս գիւրջը մեր ազգիները
կատմութիւն ունեցած փափաքեալ չկրնար
արդէն ըլլալ. թէպէտ եւ նոյն խել Եւ-
րոպայի մէջ ալ բաւական չէ խօսքի տէր
ըլլալու եւ կառավարական պաշտօններ վա-
րկու համար միայն դուքս, լորտ, մար-
քիզ եւ կոմս արտոններն ունենալ, եւ
չենք յուսար որ Մեծմուսլին կարող ըլ-
լայ մեզի ցոյց տալու խնդր լըրա մը, ա-
պուշ մարքիզ մը, արմար դուքս մը, եւ
տղեւ կոմս մը որ լոկ իր ցեղական ապը-
ւականութեանն ու ժառանգական անուա-
նը համար կառավարութեան բարձր պաշ-
տօններ վարէ. մինչդեռ մենք եւ մեզի
հետ բոլոր մեր ժամանակակիցները, Մեծ-

մուսլին ալ մէկ տեղ, 'կրնանք յիշել՝ աղ-
գին մեծամեծ բարիք ընող ազգասէր խե-
հական եւ բանիրուն հարուստներու եւ ա-
միրաներու հետ՝ նաեւ Գաղղիայի անձինք՝ որ
միայն իրենց ոսկին շատութեամբ պատ-
ճառաւ ամիրայ կոչուած էին, եւ իրենց ան-
ուան մակդիրը՝ խելքի, համալթեան եւ
բարոյական վարկան համանշանակ չէր.
այնպիսի անձինք՝ որ միայն իրենց հարստ-
տութեան ուժովը խօսքի տէր եղած՝ եւ
իրենց տգիտութեամբն ու անխոհական
վարմունքովն աւելի փառ հանուցած են
ազգին քան թէ օրուստ :

Մեր խօսքը միայն մեր ազգին եւ մա-
նաւանդ հարուստներուն վրայ ըլլալով,
գիտութիւնը հանձարը եւ բարոյական վար-
կումը առաւել անոնց վրայ կը փախն-
քինը տեսնել, որ իրենց հոգաւորութեամբ
բը միանգամայն խօսքի տէր ալ ըլլալով,
ազգին ճշմարտ բարիք եւ մեծամեծ ծա-
ռայութիւններ կրնան ընել :

Ռատի Մեծմուսլին մեզի օտար աղ-
գեր ցոյց տալու աւելորդաբանութիւն, եւ
հետեւցնելով թէ մենք չաղկապը մակրայէն
կամ բաղայապիւր բացայայտեալն որոշել
զիտողներուն կամ ազգին մէջ նոր քե-
րականութիւններ տեղադրողներուն միայն
կուզենք ամիրայ պատուանուելը ընծայել
եւ գտնել միայն խօսքի տէր ճանաչող իւր
սեփական բաւերը զարձակելով, մեծ ան-
մուսլեան (համաբաթ) պտուղ, տարօրիւ
նակ վիճի, եւ յայտնի ստու է. Թէ որ
ասանկ չենէ, ուրիշն կը հարկադրինք ը-
սելու թէ Մեծմուսլին պարզապէս կը
պահանջէ մենէ որ օսկիւն արձաններու եւ
մարտաբեկներու ինկարկու ըլլանք :
Այս ալ մեր ներքին համոզմանը բացարձակ
գէմ է. Մեծմուսլին ապաւ է այդպիսի
ինկարկութիւններ ուզածին չափ ընելու,
եւ քաւ լիցի մեզ որ իր այդ աղաւտու-
թեամբ գէմ մեղանենք :

Իսկ թէ որ մեր մէկ քանի տող
պարզ գիտողութիւնը տախի ընելով՝
կուզէ Եղբին մէջ նոր քերականութիւն
ներ հանող գրիչները հեղինակ, այդ առու-
տուրին մէջ չենք մոտեն, եւ կը թողուիք
որ « ուղղական բաւ բնուել տեղ ուղղա-
կան խաւ ըսողները կամ պարտականը
բացատրանէն վեր դնեն ու զարտուղի
բայերը լծորդեն խնամութիւն կարծող
ները » խօսին իրեն հետ, եթէ Մեծմու-
սլին բաժնի պէս իրօք Եղբին մէջ խօսքի
տէր եւ ամիրայ ըլլալ կրնային :

Հետեւեալ յօդուածը հետաքրքրա-
շարժ նկարագրի մ'է Եւրոպիայի Միաց-
եալ Կայսրացայ ժողովուրդներուն ըն-
թերցասիրական եռանդին եւ հետեւաբար
լրագրիչներուն ստացած զարմանալի յառա-
ջարկութեանն ու կարեւորութեանը, եւ
կրնայ մեր ազգին ընթերցասիրական վի-
ճակին ընդգիծապատկեր մը ըլլալ :

« Կան երկիրներ՝ ուր լրագրիչները տե-
լութեան չորրորդ իշխանութիւնն են.
կան երկիրներ ալ՝ ուր երրորդ իշխանու-
թիւնն են. Իսկ Եւրոպիայի Միացեալ
նահանգաց մէջ՝ առաջին իշխանութիւնն
են :

« Մտնք են որ նախադասներ կը դը-
նեն կը վերցնեն, կառավարութեան պաշ-
տօնեայ ըլլալը անձերը կը ցույց տան, օ-
րենադրները կը հրահանգեն եւ անոնց ը-
նեղը որոշումները կաղեն, պատերազմ
կը հրատարակեն եւ խաղաղութիւն կը
հաստատեն :

« Իրենց ձայնն անդադար կը հնչէ, եւ
անխնայ գործունեութիւն մը ունին. չկայ
ամենափոքր գիւղ մը որ աչքէ չանցնեն,
չկայ խնդիր մը որ չլուզեն, չկայ խնդիր
մը որ չլուծեն :

« Համբաւներ կը շինեն ու կաւրեն.
երեւոյն պաշտած կուռքերն արտաքին կը
խորտակեն. արտաքինութիւններու ան-
յաղ տեսացոյ, վարպետի միւսն պէս
զիւրադարձ, երես եղած տղու մը պէս
կամակոր, որ եւ է սանձի անժողով, որ եւ
հետամտութեան անհանգուրժ, վերջապէս
Հոգեկաստանի ուսման մը պէս բացարձակ
ձակասէր. այսպէս են լրագրիչներն Մեծ-

Կ. ՊՈԼԻՍ ԶԻՆԻԼԻ ԽԱՆՈ